# Կինը և քաղաքականությունը

Անվճար հավելված

2013 նոյեմբեր

www.WomenNet.am

Հայ տղամարդիկ «ո՛չ» են ասում կանանց նկատմամբ բռնությանը



էջ 4

## Փաստաշար

### Բազմազավակ ընտանիքները՝ աղքատության ճիրաններում





Հայաստանում չորս երեխա ունեցող ընտանիքների մասնաբաժինը ընդամենը 0,6 % է, հինգ և ավելի երեխա ունեցողներինը՝ 0,1 %: Բազմանդամ և երեխաներ ունեցող տնային տնտեսությունների շրջանում աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է: Երեք և ավելի (0-5 տարեկան) երեխաներ ունեցող տնային տնտեսությունների աղքատության մակարդակը 78% է, այսինքն՝ նրանք հանրապետական միջին մակարդակի (35,0%) համեմատությամբ կրկնակի աղքատ են:

### Ծնելիության ցուցանիշը հասցնել մինչև 1,8-ի



Հայաստանում ծնելիության ցուցանիշը վերարտադրողական տարիքի մեկ կնոջ հաշվով 1,6 երեխա է, մինչդեռ բնակչության պարզ վերարտադրության ապահովման համար անհրաժեշտ է 2,1: Կառավարությունը նպատակ է դրել մինչև 2017թ. ծնելիությունը հասցնել 1,8-ի, ինչը բավական դժվար կլինի՝ հաշվի առնելով, որ ըստ ՄԱԲՀ-ի հետազոտությունների՝ այսօր միջին վիճակագրական ընտանիքի համար երկու երեխան սահման է: Մեծ մասը նախընտրում է սահմանափակվել մեկ երեխայով, թեև համարում է, որ իդեալում պետք է երեք երեխա ունենալ: Դրա հետ մեկտեղ Հայաստանում բոլոր հղիությունների 29%-ը ընդհատվում է արհեստական ճանապարհով:





ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի տվյալներով՝ նորածին երեխաների սեռերի անհամաչափության ցուցանիշով (114 տղա, 100 աղջիկ) Հայաստանը գտնվում է աշխարհում երրորդ տեղում՝ Չինաստանից և Ադրբեջանից հետո: Մինչդեռ նորածինների սեռերի բնականոն հարաբերակցությունը ոչ ավելին է, քան 106 տղա և 100 աղջիկ...

Երիտասարդ ռեժիսոր Ադրինե Գրիգորյանը իր «Բավական» վավերագրական ֆիլմում փորձել է բարձրացնել Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման թեման: Ֆիլմի նկարահանման աշխատանքներին մեծ աջակցություն է ցուցաբերել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Ֆիլմը ներկայացնում է սելեկտիվ աբորտների խնդիրը այն կանանց պատմությունների միջոցով, ովքեր ճնշման են ենթարկվել և ստիպված են եղել դիմել այդ քայլին, որովհետև երեխան, որ պիտի ծնվեր, աղջիկ էր:

«Ո՞նց կլինի՝ տղա չունենամ, բա տանս ճրագը ո՞վ վառ պահի, աղջիկը մերը չէ, աղջիկը ուրիշի տան ծուխն է»,- հայ կանանց մի մասն իսկապես այդպես է մտածում, բայց շատերը դիմում են սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման ամուսնու և ընտանիքի մյուս անդամների ճնշման ներքո:

«Այդպիսի բան չկա, որ օջախի կրակը աղջիկ կամ տղայով է պայմանավորվում, մարդով է պայմավորվում: Այսօր հայ ժողովուրդը հեռացել է Աստծուց իր տգիտությամբ, իր հանցավոր գործունեությունը պայմանավորում է սուտ ժողովրդական մեկնաբանությամբ»,- փաստում է Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տեր Սեպուհ արք. Չուլջյանը:

«Սա մեր ազգի համար պարզապես խայտառակություն է: Վստահ եմ, որ անելիքներ ունենք բոլորս՝ և՛ պետությունը, և՛ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, և՛ քաղաքացիական հասարակությունը», - վերջերս գրեց իր ֆեյսբուքյան էջում ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավար Վիգեն Սարգսյանը՝ արձագանքելով Հայաստանում սելեկտիվ աբորտների խնդրին:

*Թեմայի շարունակությունը՝ էջ 2*

## Մարտահրավեր

### Հայաստանի ընտանիքները փորձությունների առջեւ

**Ի՞նչ մարտահրավերների առաջ է կանգնած այսօր հայ ընտանիքը: Աղքատություն, որի ճիրաններում են հատկապես բազմազավակ ընտանիքները, գործազրկություն և արտագաղթ, որի պատճառով երեխաները հաճախ մեծանում են առանց հոր մասնակցության, ընտանեկան բռնություն, որը ոչ միայն ծնողների, այլև իրենց՝ երեխաների ճակատագրերն է խեղաթյուրում, «ավանդական արժեքների» սխալ պատկերացում, ինչի հետևանքով նվաստացած, տան չորս պատերի ներսում փակված կինը մոռանում է իր անձի և իր ստացած կրթության մասին, դադարում է իրեն ոչ միայն հասարակության, այլև ընտանիքի լիիրավ անդամ զգալուց... Եվ մի՞թե մեզ համար միևնույն է՝ ինչպիսի՞ն են լինելու նման ընտանիքներում մեծացած երեխաները...**

Կամ միթե մեր պետությունն այսօր կարող է իրեն շռայլություն թույլ տալ անտեսելու կանանց ներուժը... Մենք այսօր ունենք ծնելիությունն բարձրացնելու լուրջ խնդիր, բայց մենք ունենք նաև մեր կրթված կանանց ռեսուրսը երկրի զարգացման գործընթացներում լիարժեք ներգրավելու խնդիր: Ինչպիսին պետք է լինի այն ոսկե միջինը ապահովվող քաղաքականությունը, որը հնարավորություն կտա միաժամանակ և արդյունավետ լուծելու այս երկու խնդիրները... Մի փոքր վիճակագրություն այս կապակցությամբ. մեր հանրապետությունում նախադպրոցական տարիքի երեխաների միայն 21,6 %-ն է մանկապարտեզ հաճախում, իսկ գյուղական համայնքներում՝ ընդամենը 10,5 %-ը: Այս պաշտոնական թվերը ընդամենը փաստում են, թե որքան դժվար է երիտասարդ մայրերին համատեղել աշխատանքն ու ընտանիքը: Ընդ որում, այսօրվա սոցիալ-տնտեսական պայմաններում կնոջ չաշխատելու տարբերակը գրեթե չի դիտարկվում, այլապես երիտասարդ ամուսինները չեն կարողանա ո՛չ ընտանիքի գոյատևման հարցը լուծել, ո՛չ էլ մեկից ավելի երեխա ունենալ...

Եվ այստեղ է, որ պետությունը պետք է ձեռք մեկնի նրանց՝ հնարավորություններ ստեղծելով աշխատանքն ու ընտանեկան հոգսերը համատեղելու համար, հակառակ դեպքում ծնելիության հետագա նվազումը անխուսափելի է դառնում... Հարցի լուծումը միայն բավարար թվով մանկապարտեզներ ունենալու մեջ չէ, խոսքը ընտանիքամետ քաղաքականության մասին է, որի անբաժանելի մասն է նաև կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովումը...

Իսկ թե կոնկրետ ինչպե՞ս է դա արվում աշխարհի տարբեր երկրներում, մեզ պատմեց ժողովրդագրության հարցերով ՄԱԲՀ-ի միջազգային փորձագետ Ռալֆ Հակերտը, ում հետ առիթ ունեցանք հանդիպելու Երևանում կայացած ծնելիության խթանման ծրագրերի շուրջ քննարկման ժամանակ:

*Շարունակությունը՝ էջ 2*

## «Արագիլ»

### Առաջին փիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի կոչը



**ՀՀ Նախագահի տիկին Ռիտա Սարգսյանը հանդես է եկել ազգային համախմբման կոչով՝ առաջարկելով կենտրոնացնել համայն հայության ջանքերը և աջակցություն ցուցաբերել այն ընտանիքներին, որոնք զգում են վերարտադրողական բժշկության կարիքը.**

«Ինչպես մի կաթիլ ջրի մեջ օվկիանոս է արտացոլվում, այդպես էլ յուրաքանչյուր հայ ընտանիքի մեջ արտացոլվում է ամբողջ մեր ազգը: Մենք պետք է օժանդակություն ցուցաբերենք ցանկացած զույգի, որն ունի ծնող դառնալու ցանկություն», - համոզված է տիկին Ռիտա Սարգսյանը՝ հորդորելով բարի կամքի բոլոր մարդկանց միավորվել «ԱՐԱԳԻԼ» վերարտադրողական բժշկության աջակցության հիմնադրամի շուրջ:

Նշենք, որ «ԱՐԱԳԻԼ» հիմնադրամը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է, որի նպատակն է աջակցել Հայաստանի ժողովրդագրական խնդիրների լուծմանը և վերարտադրողական բժշկության կազմակերպմանը: Հիմնադրամը ստեղծվել է 2011-ին և գործում է ՀՀ Նախագահի տիկնոջ՝ Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո:

**Հիմնադրամի մասին մանրամասն ՝ http://fundaragil.am/ կայքէջում**

## «Օրորոց»

### Երջանկացրե՛ք եւ երջանիկ կլինեք...



Լուսանկարը՝ Հարութ Ստեփանյանի

**«Օրորոց»՝ համազգային հոգածություն նորածիններին» բարեգործական ծրագրի այս ուղերձին միացել են հարյուրավոր կազմակերպություններ ու անհատներ Հայաստանից և արտերկրից:**

Ավելի քան 10 տարի է, ինչ «Հայաստան» համահայկական հիմնադրամի և կանանց կազմակերպությունների համատեղ այս ծրագիրը օգնություն է ցուցաբերում մինչև 1 տարեկան երեխա ունեցող կարիքավոր ընտանիքներին:

Անցած տասը տարիների ընթացքում «Օրորոցը» արդեն իսկ օգնել է Սյունիքի, Տավուշի, Լոռու և Շիրակի մարզերի սահմանամերձ գյուղերի ավելի քան 1400 ընտանիքների՝ հատուկ փաթեթներ հանձնելով նորածիններին: Մոտ 10 կգ կշռող յուրաքանչյուր փաթեթը պարունակում է մինչև մեկ տարեկան երեխային անհրաժեշտ տարբեր պարագաներ՝ հագուստ, խնամքի և հիգիենայի միջոցներ:

Ուզո՞ւմ եք երկիրը շենանա, ուզո՞ւմ եք երկիրը պաշտպանող վաղվա զինվորը ծնվի, որ վաղվա դերասանն ու մարզիկը լինեն, վաղվա գրողն ու նկարիչը:

Եկեք այսօր ամբողջ ազգով և սրտով օգնենք, սատար կանգնենք մեր ապագա և փոքրիկ քաղաքացիներին:

Ձեր նվիրատվությունը կարող եք փոխանցել «Օրորոց» ծրագրի հատուկ հաշվին `

«Կոնվերս բանկ» ՓԲԸ//Converse Bank CJSC
26/1, V. Sargsyan Str. 375010, Yerevan, Armenia

SWIFT: COVBAM 22
1. 1930000081130300 (AMD)
2. 1930000081130204 (EUR)
3. 1930000081130101 (USD)

## Սելեկտիվ աբորտներ

# «Մինչեւ 2060-ը կկորցնենք գրեթե 93 հազար ապագա մայր»

**ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակի՝ Հայաստանում սեռով պայմանավորված աբորտների վերաբերյալ վերջին երկու տարիներին իրականացված հետազոտությունները թույլ են տալիս որոշակի եզրահանգումներ անել երևույթի տարածվածության, դրա պատճառների և հետևանքների մասին: Մասնագետների պնդմամբ՝ սա ժողովրդագրական լուրջ մարտահրավեր է Հայաստանի համար:**



### Ինչպիսի՞ն է իրավիճակը

ՄԱԲՀ-ի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանի պարզաբանմամբ՝ նորածինների սեռերի հարաբերակցությունը Հայաստանում շեղվել է 1990-ականներից, մասնավորապես, 2012 -ին այն կազմել է 114 տղա 100 աղջկա դիմաց, մինչդեռ բնականոն է համարվում 106 տղա,100 աղջիկ հարաբերակցությունը: Ընդ որում, Հայաստանում նորածին երեխաների սեռերի անհամաչափությունը առավել նկատելի է ոչ թե առաջին կամ երկրորդ, այլ երրորդ երեխայի դեպքում, երբ այն ուղղակի ահռելի տարբերություն է տալիս՝ 160 տղա 100 աղջկա դիմաց:

«Ունենք նաև մարզային կտրվածքով տվյալներ, ըստ որոնց Հայաստանի որոշ մարզեր՝ Գեղարքունիքը և Արագածոտնը, իրենց 124 տղա, 100 աղջիկ հարաբերակցությամբ աշխարհում ամենաբարձր ցուցանիշն են: Ի դեպ, հետաքրքիր դիտարկում՝ այդ մարզերում ամենամեծ միգրացիոն հոսքերն են: Ինչ վերաբերում է տարածաշրջանին, ապա ըստ տվյալների՝ Ադրբեջանը՝ 116, Հայաստանը՝ 114, Վրաստանը՝ 113, այսինքն՝ համարյա բոլորս նույն նավակի մեջ ենք», - նշում է Հայրապետյանը:

### Ո՞րն է պատճառը

Այս երևույթի հիմքում, ըստ Գարիկ Հայրապետյանի, գենդերային անհավասարությունն է. հենց այդ անհավասար կարծրատիպային վերաբերմունքի պատճառով ենք մենք զրկում աղջիկ պտղին ապրելու իրավունքից: Եվ միայն կնոջ արժեքն ու դերը հասարակության մեջ բարձրացնելով հնարավոր է պայքարել դրա դեմ:

### Ի՞նչ հետևանքներ է ունենալու

Փարիզի բնակչության և զարգացման կենտրոնի զարգացման հետազոտական ինստիտուտը ներկայացնող դոկտոր Քրիստոֆ Գիլմոտոյի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եթե շարունակվի աղջիկների ծնունդը խափանելու գնով տղաներ ունենալու արատավոր երևույթը, ապա Հայաստանը մինչև 2060 թ. կկորցնի գրեթե 93 հազար ապագա մայր, իսկ երկրի բնակչությունը կնվազի հավելյալ 80 հազար մարդով (սա այժմ Հայաստանի 2 տարվա ծնունդների թիվն է): 1996 թ.-ից հետո ծնվածների մեջ տղաների ավելցուկը կազմում է 39 հազար: «Եթե այս միտումը չկասեցվի, ապա ամուսնական ամենաակտիվ տարիքի՝ 20-39 տարեկան տղամարդկանց մի մասը շուտով սկսելու է ընտանիք կազմելու դժվարություններ ունենալ և, կին չգտնելով, մեկնել երկրից՝ այդպիսով խթանելով արտագաղթը»,- նշում է փորձագետը:

### Ի՞նչ անել

Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՄԱԲՀ-ի Բնակչության հիմնադրամի տարածաշրջանային բյուրոյի տնօրեն Վերներ Հոգի կարծիքով՝ առանց կնոջ կարգավիճակը հասարակությունում բարելավելու սելեկտիվ աբորտները կշարունակվեն՝ կործանարար հետևանքներ ունենալով ապագա սերունդների համար:

«Մեր հասարակության մեջ կնոջ դերը շատ ավելի նվազ է, քան տղամարդու դերը: Եթե մենք շարունակենք այդ կերպ մտածել և արմատախիլ չանենք հասարակության մեջ այդ մոտեցումը, ինչպես նաև փոփոխություններ չլինեն գենդերային հավասարության ոլորտում, օրինակ՝ ինչո՞ւ կինը պետք է նույն պաշտոնը զբաղեցնելիս պակաս աշխատավարձ ստանա և այլն, ապա իրավիճակը կմնա նույնը, ու մեր երկիրը տասնամյակներ հետո լուրջ աղետի առջև կկանգնի»,- ասում է Գ.Հայրապետյանը՝ նշելով, որ կառավարությունը որոշակի քայլեր այս ուղղությամբ արդեն ձեռնարկել է, մասնավորապես՝ ընդունելով «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքը»:

«Կառավարությունը չի կարող ինչ-որ հրամանագրով լուծել խնդիրը, քանի որ այստեղ ավելի լուրջ ու խորքային աշխատանք է հարկավոր տանել՝ փոխելով հասարակության մտածելակերպը, վարքագծային մոդելները»,- նշում է դոկտոր Քրիստոֆ Գիլմոտոն:

*Լիա Խոջոյան*

## Մարտահրավեր

# Հայաստանի ընտանիքները փորձությունների առջեւ

*Սկիզբը՝ էջ 1*

Գաղտնիքը, ըստ փորձագետի, այնպիսի պայմանների ստեղծման մեջ է, որոնք հնարավորություն են տալիս ծնողների միջև հավասարաչափ բաշխելու երեխայի խնամքի հետ կապված բեռը:

«Եթե կինն այսօր դուրս է գալիս աշխատանքային շուկա, որը հարմարեցված չէ երեխաներ ունեցող աշխատողի համար, ապա խնդրի լուծումն այն չէ, որ կանանց պետք է հետ մղել շուկայից, այլ հակառակը՝ պետք է պայմաններ ստեղծել, որ ցանկացած աշխատող կարողանա համատեղել աշխատանքն ու երեխայի խնամքը: Մի խոսքով, պետք է ոչ թե հետ, այլ առաջ նայել՝ հարմարվելով ժամանակի մարտահրավերներին»,- ասում է Հակերտը՝ նշելով այն միջոցառումների շարքը, որոնք կիրառվել են տարբեր երկրներում և որոշակի արդյունք տվել: Դրանց թվում են ոչ միայն պատշաճ մակարդակով գործող մանկապարտեզների, դպրոցներում երկարօրյաների, երեխայի խնամքն իրականացնող այլ հիմնարկների առկայությունը, այլև աշխատանքային ճկուն գրաֆիկը ընտանիք ունեցողների համար, երեխայի խնամքի համար վարձատրվող արձակուրդից օգտվելու հնարավորություն և՛ հայրերի, և՛ մայրերի համար:

«Հոլանդիայում, օրինակ, շաբաթական 35-ժամյա աշխատանքային գրաֆիկի պարագայում ծնողները հերթով օգտվում են մեկ ազատ օր ունենալու հնարավորությունից՝ արդյունքում հատկացնելով հավելյալ օրերը երեխային»,- նշեց Հակերտը: Ի պատասխան մեր այն դիտարկմանը, որ գործատուի տեսանկյունից նման աշխատող ունենալը գուցե ձեռնտու չէ, փորձագետն ասաց, որ իրականում կարևոր է ոչ թե ինչքա՞ն ես աշխատում, այլ ինչպե՞ս: Այսինքն՝ խոսքը աշխատանքի արդյունավետության ու արտադրողականության մասին է, դա է գլխավոր չափանիշը, և այդ չափանիշով Հոլանդիան առաջատար երկրներից է համարվում:

Դրա հետ մեկտեղ, մի շարք երկրներում՝ Իսպանիայում, Իտալիայում, Հունաստանում, երեխայի խնամքին հոր մասնակցության մեխանիզմը թեպետ օրենսդրորեն ամրագրված է, բայց չի գործում: Տղամարդիկ գրեթե չեն օգտվում իրենց ընձեռված հնարավորությունից, քանի որ նրանց մոտ աշխատանքը կորցնելու մտավախությունը շատ ավելի մեծ է, քան կանանց պարագայում: Նույն պատկերը Հայաստանում է:

ՄԱԲՀ-ի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանի դիտարկմամբ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այդ հնարավորությունից օգտվել է ընդամենը 2 տղամարդ, երկուսն էլ՝ մարզերից: Նրանք գնացել են երեխայի խնամքի համար նախատեսված արձակուրդ: Ինչ վերաբերում է մտածելակերպի խոչընդոտներին, իբր տղամարդու համար ամոթ է «դեկրետ» գնալ, ապա դրանք, նրա համոզմամբ, հաղթահարելի են, եթե խոսքը ընտանիքի բարեկեցության մասին է:

Կան և այլ բավականին հետաքրքիր գաղափարներ: Օրինակ՝ երեխայի խնամքի համար նպաստը կարելի է հատկացնել տատիկներին և պապիկներին՝ դրանով իսկ լուծելով մեծահասակների զբաղվածության խնդիրը: Հատկապես Հայաստանի համար այս մեխանիզմը կարող է արդյունավետ լինել:

Ինչ վերաբերում է միանվագ գումարների հատկացմանը երեխայի ծննդյան դիմաց թեպետև կիրառվում է, սակայն Ռալֆ Հակերտի գնահատմամբ՝ այնքան էլ արդյունավետ միջոց չի համարվում: Ավելի լավ արդյունք է տալիս երկարատև աջակցությունը:

«Դժվար է երիտասարդ ընտանիքին համոզել շատ երեխաներ ունենալ, եթե նրանք վստահ չեն իրենց ապագայի հարցում: Միանվագ գումարը այս խնդիրը չի լուծում, իսկ, ասենք, երեխայի սուբսիդավորումը ծնվելու օրվանից մինչև 15 տարեկան, կամ երիտասարդ ընտանիքների բնակարանային պայմանները բարելավելու ուղղությամբ պետության աջակցությունը ավելի գործուն միջոցներ են: Օրինակ՝ Մակեդոնիայում յուրաքանչյուր երրորդ և հաջորդ երեխայի համար պետությունը 10 տարվա ընթացքում 150 դոլարի չափով նպաստ է վճարում»,- ասում է փորձագետը՝ նշելով, որ իրականում խոսքը կայուն և համակողմանի քաղաքականության մասին է, որի հիմքում ոչ միայն երեխայի ծնունդը խրախուսող, այլև նրա խնամքը հեշտացնող միջոցառումներ են:



Լուսանկարը՝ Դավիթ Մակիչյանի

«Միգուցե ավելի ճի՞շտ է՝ մեր Աշխատանքային օրենսդրությունը բարելավենք և հնարավորություն տանք մարդկանց վստահ լինել իրենց ապագային: Օրինակ՝ դեկրետ գնալու պարագայում պահպանելով աշխատավարձի 80-85 տոկոսը, այդ դեպքում առանց նպաստի էլ երեխա կունենան: Պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, որ մարդիկ երեխա ունենան ցանկությամբ, այլ ոչ թե փողի դիմաց»,- կարծում է Գարիկ Հայրապետյանը:

> «*Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հայտարարել է, որ 2014 թվականին երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան միանվագ նպաստը կլինի 500 հազար, հինգերրորդ և ավելի երեխաներ ունեցողների համար՝ 1 մլն դրամ: Ծնելիության աճին նպաստելու՝ կառավարության քաղաքականությունը առավել արդյունավետ կլիներ, եթե միանվագ նպաստը ավելացվեր ոչ թե «երրորդ և ավելի», այլ «երկրորդ և ավելի» սկզբունքով, քանզի այսօր ծնելիության հարցում առավել խնդրահարույց է երկրորդ երեխայի հարցը: Ավելին՝ առանց երկրորդ երեխայի ծնելիությունը խթանելուն ուղղված քայլերի դժվար է ակնկալել, որ ընտանիքներում երեք և ավելի երեխաներ կծնվեն:*»
>
> *Փորձագետ Տիգրան Աբրահամյան*

## Երբ «տուն պահողը» կինն է…

# «Մնում է մի հատ գոգնոց կապեմ ու վրեն գրեմ՝ Նինայի կնիկը»…

**Տղամարդը տան գլխավորն է, տուն փող բերողը և պահողը՝ սա ոչ միայն հայկական մտածելակերպին բնորոշ պատկերացում է: Դրա հետ մեկտեղ այսօր քիչ չեն ընտանիքները, որտեղ տուն փող բերողը և պահողը կինն է: Կյանք է, ամեն ինչ կպատահի, կարևորը՝ երեխաները սոված չեն: Մնում է տանը գնահատեն կնոջը և հարգեն նրան, իսկ եթե ո՞չ…**

- Ամուսինս միշտ պատճառաբանում է, թե իրեն հարմար աշխատանք չկա, և արդեն 5 տարի է, չի աշխատում,- պատմում է Նինան, ում ամուսինն ավարտել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը և երկար տարիներ աշխատել դպրոցում, հետո տարբեր աշխատատեղեր: Վերջին աշխատանքը սպորտդպրոցում է եղել, որից էլ ազատվել է, իր իսկ ասելով՝ ցածր աշխատավարձի համար: Արդյունքում՝ տան հոգսը ծանրացել է Նինայի ուսերին: Այս տարիների ընթացքում Նինան կատարել է ամենատարբեր աշխատանքներ՝ աման լվալուց մինչև հավաքարար և արդեն երեք տարի է, արագ սննդի կետերից մեկում աշխատում է որպես գանձապահ:

- Սկզբում, երբ ամուսինս առանց աշխատանքի մնաց, մտածում էի, որ շուտով նոր աշխատանք կգտնի,- պատմում է Նինան: - Եվ սկզբում փորձեր էր անում, բայց երբ նոր գործ գտնելը ձգձգվեց, ես ստիպված, գոնե ուտելիքի գումար հայթայթելու համար, տեղավորվեցի հարսանյաց սրահում որպես հավաքարար, հետո ամաններն էի լվանում, խանութում էլ եմ աշխատել, մինչև հասա այստեղ:

Սակայն Նինայի ամուսինը այդպես էլ իրեն հարմար աշխատանք չգտավ և գտնելու փորձերն էլ թողեց:

- Իրականում ոչինչ չի ուզում անել,- ասում է Նինան,- նրան այսպես հարմար է, և դրա համար լավ առիթ է գտել, թե ինքը կոպեկների համար մեջքն ամեն անարժանի առաջ ծռողը չէ, որ դա մուրացկանության նման մի բան է, հո ինքը մի փոր հացի աշխատո՞ղ չի: Նա ասում է, որ ինքն իր բիզնեսն է ուզում ունենալ, բայց դրա համար իրեն շատ գումար է հարկավոր, իսկ այդքան գումար իրեն ո՞վ կտա:

Մինչ Նինայի ամուսինը երազում է սեփական բիզնեսի մասին, տան բոլոր ծախսերը հոգում է կինը՝ ուտելը, հագնելը, երեխաների դպրոցի հետ կապված բոլոր ծախսերը, կոմունալ վարձերը և մինչև անգամ ամուսնու ծխախոտ գնելը:

Նինան պատմում է, որ ինքը երբեք չի էլ համարձակվում խոսել ամուսնու աշխատելու մասին, առանց այդ էլ հենց աշխատանքից տուն է մտնում, սկսվում է կռիվը: Ամուսինը ամեն ինչի մեջ իր հասցեին վիրավորանք է տեսնում՝ մեկ կինը թարս նայեց, մեկ ձեռքն այնպես չշարժեց, այսպես ասաց՝ նկատի ունենալով մեկ այլ բան և հազար ու մի եղած ու չեղած մանրուքներ:

- Այս ամենն ուղղակի անտանելի է, ես ոչինչ չեմ պահանջում, ընդամենը՝ հարգանք,- հուզվում է Նինան, ով վերջերս նկատել է, որ անգամ երեխաները (աղջիկը 16 տարեկան է, տղան՝ 13) սկսել են իր հանդեպ անհարգալից վերաբերմունքի նշաններ ցույց տալ: Իսկ երբ փորձել է կշտամբել երեխաներին, որ իրեն չեն օգնում, սա ևս առիթ դարձավ ամուսնու համար հիշեցնելու, որ նա կին է ու մայր, և ցանկացած տնային աշխատանք նրա պարտականությունն է:

- Մի անգամ տուն եկա, կարտոֆիլի պյուրե կար. սա եզակի դեպք էր: Երբ զարմացա, թե որտեղի՞ց, ամուսինս նեղացած և հեգնական տոնով ասաց. «Դե, ես արդեն տան կնիկ եմ դառել, ճաշ էլ եմ էփում, աման էլ եմ լվանում, երեխեքին էլ եմ դասից դիմավորում, վաղվանից կսկսեմ քո շորերն էլ լվանալ… Մնում է՝ մի հատ գոգնոց կապեմ ու վրեն գրեմ՝ Նինայի կնիկը, քեզ էլ արտոնություն եմ տալիս՝ վաղվանից տուն կգաս, կգոռաս, կջարդես, ինձ էլ կհայհոյես»…

*Կարինե Պետրոսյան*

## Ընտանեկան բռնությունը թվերով

ՀՀ ոստիկանության տվյալներով՝ այս տարվա առաջին ինն ամիսներին Հայաստանում գրանցվել է ընտանեկան բռնության 532 դեպք: Դրանցից 308-ի դեպքում կինը բռնության է ենթարկվել ամուսնու կողմից: 11 դեպք էլ գրանցվել է, երբ կանայք են հանդես եկել բռնարարի դերում:

30-ի դեպքում զավակները բռնության են ենթարկվել ծնողների կողմից, իսկ 70-ի դեպքում՝ զավակներն են բռնության ենթարկել ծնողներին:

«Վեց ամիսների ընթացքում ոստիկանություն է դիմել մոտ 2 հազար կին՝ ներկայացնելով դիմում բողոք իրենց նկատմամբ կատարված բռնության վերաբերյալ»,- նշում են ոստիկանությունից:

## Փակ դռների հետևում

# Բռնությունը ավանդույթ չէ, ամուր ընտանիքի հիմքը սերն ու հարգանքն է

**«Ներկի հոտը շատ ուժե՞ղ ա, կուզե՞ս գնանք կողքի սենյակումը նստենք,- հարցնում է Վալյան ու ավելացնում,- ես հոտառություն չունեմ, ջահել վախտս Վալոդը որ խփեց, խփել էր քթիս, հոտառությունը կորցրել եմ»: 50-ն անց կինն այնքան հանգիստ ու անվրդով պատմեց իր կյանքի այդ փոքրիկ դրվագը, կարծես ամուսնուց ստացած ծեծից ցավ չէր մնացել նաև հիշողության մեջ:**

Վալյան նոր էր ավարտել սենյակի պատերի ներկումը, երբ այցելեցի սահմանամերձ գյուղում գտնվող նրա տուն: «Մի քիչ տունը ուզում եմ կարգի բերեմ, փոքր տղուս պիտի ամուսնացնեմ»,- ասում է ներկոտված ձեռքերով կինն ու ցույց տալիս, թե ինչքան գործ է արդեն արել. «Հարևանի էրեխին ղարգել եմ՝ դռելը բերի, թազա հայելի պտի կախեմ, էլի ես պտի անեմ, Վալոդը դռելով չի կարում գործ անի…» Վալոդը կնոջ կողքին կանգնած լուռ լսում է: Նրա ներկայությամբ կաշկանդվում եմ կնոջից հարցնել, թե ինչո՞ւ է երիտասարդ տարիքում ֆիզիկական բռնության ենթարկվել ամուսնու կողմից:

«Վալո՛դ ձյա, բա ինչի՞ ես քո լավ կնոջը ծեծել ջահել ժամանակ»,- փորձում եմ ամուսնուն ներգրավել խոսակցության մեջ: «Տենց հարցեր մի տուր, է՜»,- ձեռքը թափ տալով՝ դուրս է գալիս տնից: «Ինքը հիմա ամաչում ա իբր, բայց ջահել վախտս շան ծեծ էր տալիս, երկու անգամ ձեռքս կոտրալ ա»,- Վալյան այժմ դժվարանում է հիշել, թե ի՞նչն էր ծեծի պատճառը, ասում է՝ ամեն անգամ մի առիթ գտնվում էր. մի օր Վալոդն էր հարբած լինում, մի օր սկեսրոջ հետ էին վիճած լինում:

Ամուսնու կողմից բռնության ենթարկվելու մասին Վալյան ժամանակին ոչ մեկին չի պատմել, նույնիսկ հարազատ մորը, սակայն տարիներ անց չի կաշկանդվում խոսել այդ մասին. «Դու գրի, որ առաջ ուրիշ էր, հիմա դարը փոխվել ա, շատ աղջկերք միլիցիա են դիմում, եթե ամուսինը ծեծում ա…»

Հասկանալու համար, թե որքանով է դարը փոխվել, զրուցեցինք ընտանեկան բռնության հարցերով փորձագետ, Կանանց աջակցման կենտրոնի տնօրեն Մարո Մաթոսյանի հետ. նրա ներկայացրած տվյալները առանձնապես հուսադրող չեն: Միայն 2013 թվականի ընթացքում ընտանեկան բռնության հետևանքով Հայաստանում մահվան 7 դեպք է գրանցվել:

«Սրանք պաշտոնական տվյալներն են, սակայն չի բացառվում, որ կան շատ ավելի դեպքեր, որոնք չեն դիտվել որպես ընտանեկան բռնություն, կամ էլ բռնարարներին հաջողվել է կոծկել իրականությունը: Ընտանեկան բռնության ենթարկվող կանանց միայն փոքր մասն է դիմում ոստիկանություն, այդ պատճառով շատ դժվար է ստույգ տվյալներ ունենալ և տեսնել բռնության իրական պատկերը»,- նշում է Մարո Մաթոսյանը:

Շատ դեպքերում նույնիսկ բիրտ ֆիզիկական բռնության զոհ դարձած կանայք չեն գիտակցում, որ կարող են իրենց իրավունքները պաշտպանել, քանի որ իրազեկված չեն:

«Հասարակությունն այս հարցի շուրջ ոչ միայն չի իրազեկվում, այլ չկա նաև ընտանեկան բռնության մասին օրենք, որում հստակ կսահմանվի՝ ի՞նչ է ընտանեկան




բռնությունը, և որո՞նք են դրա դրսևորումները»,- ասում է կենտրոնի տնօրենը և հավելում, որ կանանց սխալ են դաստիարակում իրենց ընտանիքներում՝ շեշտը դնելով նրա վրա, որ իրենք պետք է ենթարկվեն ու հանդուրժող լինեն այն ամենի հանդեպ, ինչ տղամարդը կանի և կասի:

Փորձագետի խոսքով՝ երիտասարդ տարիքից աղջիկները և տղաները պետք է իրազեկվեն, թե ի՞նչ են առողջ ընտանեկան հարաբերությունները: Երբ երիտասարդները հասկանան, թե ինչպես պետք է ճիշտ վերաբերմունք ցուցաբերել միմյանց նկատմամբ, սեր ու հարգանք արտահայտել, այդ ժամանակ նրանք կհասկանան, որ բռնարար հարաբերությունը նորմալ չէ:

Նաև լավ կլիներ, որ մեր հեռուստահաղորդումները, որին շատերը հետևում են, նույնպես կնոջ նկատմամբ հարգանք քարոզեն, դատապարտեն բռնությունը և զերծ մնան կնոջը նվաստացնող կերպարներ ցուցադրելուց»:

*Արման Ղարիբյան*

## Փորձագետի կարծիք

# Ինչո՞ւ են կանայք լռում…

**«Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ հոգեբան-խորհրդատու Ֆենյա Բազոյանը նշում է, որ հաճախ բռնությունների ենթարկվող կնոջն այդ վիճակից դուրս բերելու միակ խոչընդոտը հաճախ ինքը՝ կինն է, քանի որ նա այնքան է սովորել ճնշվածությանը, որ կորցրել է «ես»-ի գիտակցումն ու նույնիսկ չի պատկերացնում, որ կարող է նաև այլ կյանքով ապրել:**

Բռնության ամենատարածված տեսակը, որին ենթարկվում է կանանց գերակշիռ մեծը, հոգեբանականն է: «Դա այն է, երբ կինն ընտանիքում անընդհատ լսում է, թե ինքն ինչքան վատն է, մեղավոր է բոլոր հարցերում, վատ կին է ու վատ մայր»,- բացատրում է հոգեբանը: Հենց դրա հետևանքով են նրանք սկսում տառապել ցածր ինքնագնահատականով, դադարում իրենց կին, առավել ևս՝ լիարժեք մարդ և ընտանիքի լիիրավ անդամ զգալ: «Իրենց իրավունքների մասին չտեղեկացված շատ կանայք ասում են, որ եթե իմ ամուսինը ինձ ծեծում է, ուրեմն ես ինչ-որ մի սխալ բան եմ արել»,- նշում է Ֆ.Բազոյանը:

Չնայած ընտանիքներում հարաբերությունները լինում են ոչ առողջ, սակայն




ամուսինները տարիներով շարունակում են համատեղ կյանքով ապրել: Կանայք միայն այն ժամանակ են քայլերի դիմում, երբ արդեն բռնության են ենթարկվում երեխաները:

Իսկ թե ինչո՞ւ են բռնության ժամանակ կանայք շարունակում լռել, ապա դա տարբեր պատճառներ ունի: «Բռնարար հարաբերությունները որոշակի փուլով են զարգանում: Սկզբից ավելի կոնֆլիկտային են դառնում հարաբերությունները, հետո լինում են բռնության ակնհայտ դեպքեր՝ վեճ, ծեծ, կռիվներ, որին հաջորդում է մեղրամիսի փուլը՝ ամուսինը զղջում է, փոշմանում, ինչը կնոջ մեջ ամրապնդում է այն հույսը, թե դեռ ամեն ինչ կորած չէ, թե կարող է ընտանիքը փրկել: Եվ սա տարիներ շարունակ կրկնվում է»:

Երկրորդ պատճառը, ըստ նրա, այն է, որ շատ կանայք վախենում են բաժանված լինել, հասարակության քննադատությունից վախենալը բերում է նրան, որ այդ հարաբերությունները պահպանվում են: Բացի այդ, կանանց մոտ կա տնտեսական կախվածություն: Ի սկզբանե չունենալով ֆինանսական ինքնուրույնություն՝ ելք չեն գտնում թողնելու այդ հարաբերությունները:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ անցկացրած հետազոտությունները փաստում են, որ շատ կանայք որոշակի դեպքերում արդարացված են համարում իրենց հանդեպ բռնությունը, օրինակ՝ եթե կինը չի ենթարկվում ամուսնուն, եթե անտեսում է երեխաներին, հավատարիմ չէ: «Սա նշանակում է, որ կանայք էլ են արդարացնում իրենց հանդեպ դրսևորված վարքը, ինչը հող է ստեղծում բռնության երևույթի տարածմանը»,- նշում է հոգեբանը:

# «Կանայք հանդուրժում են ընտանեկան բռնությունը ելք չունենալու պատճառով»…

**«Այսօր ընտանեկան բռնության պատճառներից է, որ կանայք փորձում են այս ամենը պարզապես հանդուրժել, քանի որ իրենք կախվածության մեջ են ամուսնուց, չեն աշխատում, տեղ չունեն գնալու, կացարաններ չկան, կնոջը աջակցելու համար վերականգնողական պետական ծրագրեր չկան… Դրա համար էլ ստիպված հանդուրժում են»,- կարծում է կանանց հարցերով օմբուդսմանի խորհրդական Աննա Սաֆարյանը:**

«Մի անգամ մեզ մոտ էր եկել մի կին՝ ծեծված, տնային հագուստով, նորածին երկու ամսական երեխան գրկին: Մարզից եկել էր մեր գրասենյակ ու տեղ չուներ գնալու, վախենում էր ոստիկանություն դիմել, բարեկամներ չուներ, որոնց օգնությանը կարող էր դիմել: Հասարակական կազմակերպությունների միջոցով կարողացանք գոնե ժամանակավոր կացարան գտնել նրա համար»,- պատմեց Սաֆարյանը:

«Մեր գրասենյակի խնդիրը պետական մարմիններում արձանագրվող խախտումների բացահայտումն ու կանխարգելումն է: Ըստ այդմ՝ խախտումներ են արձանագրվել ոստիկանության համակարգում, երբ բռնության ենթարկված կնոջը ոստիկանությունում պատշաճ վերաբերմունք չեն ցուցաբերել: Եղել են նաև դեպքեր, երբ ոստիկանությունում ընդհանրապես հրաժարվել են բռնության հետ կապված հաղորդում վերցնել: Նման դեպքեր հիմնականում մարզերում են արձանագրվում: Այնտեղ բոլորն իրար ճանաչում են և, մեկը մյուսի հետ համաձայնության գալով, փորձում են կնոջը համոզել հետ վերցնել դիմումը: Եղել են դեպքեր, երբ մենք ենք կնոջն ուղեկցել ոստիկանության բաժին հաղորդում տալու համար, քանի որ վերջինս վախենում էր»,- նշեց նա:

Այս առումով, Սաֆարյանը կարևորում է «Ընտանեկան բռնության մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը: Ըստ նրա՝ օրինագծով սահմանված են կոնկրետ միջոցներ, հստակ մեխանիզմներ, որոնք կնպաստեն ընտանեկան բռնության դեպքերի կանխարգելմանը, բռնության ենթարկվածին համապատասխան անհրաժեշտ աջակցության տրամադրմանը:

Հիշեցնենք, որ այս տարվա հունվարին կառավարությունը մերժել է «Ընտանեկան բռնության մասին» օրենքի ընդունման նպատակահարմարությունը՝ հայտարարելով, որ դրա փոխարեն օրենքի առանձին դրույթները ներառելու է Քրեական, Քրեադատավարական, Վարչական իրավախախտումների մասին նորացվող օրենսգրքերում: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիան, որը միավորում է խնդրով զբաղվող յոթ ՀԿ-ներ, բողոքի ցույց էր կազմակերպել՝ անհամաձայնություն հայտնելով նման մոտեցման դեմ և պնդելով, որ այն մինչև հիմա իրեն չի արդարացրել: Բացի այդ, առանձին օրենքի ընդունումը արդեն իսկ կանխարգելիչ դեր է խաղում ընտանեկան բռնության դեմ պայքարում: ՀԿ-ները հայտարարում են, որ շարունակելու են պայքարել այդ օրենքն ընդունելու համար:

*Արև Հակոբյան*

## Երեխաների ձայնը

**«Հասարակություն առանց բռնության» ՀԿ արագ արձագանքման խմբի՝ մեկ տարվա ընթացքում բացահայտած ընտանեկան բռնության 20 դեպքերից 14-ը ֆիզիկական բռնության դեպքեր են, որոնցից 7-ը՝ մահվան ելքով: Դրանցից շատերը երեխաների աչքի առաջ են կատարվել…**

***

«Էնքա՜ն ա եղել՝ կռիշում ենք քնել, սրա-նրա տանը… հոգնել էինք: Համարյա ամեն օր հարբած էր, էնա, որ խմում էր, ձեռի տակ ընկածը շպրտում էր մեր վրա, տանը բան չի մնացել, սաղ ջարդել ա… Մորս որ ծեծում էր, մեջ էինք ընկնում, մեզ էլ էր խփում: Մաման անընդհատ տենց վնասվածքներով գնում բողոքում էր, ասում էին՝ լավ չեք բողոքում. լավ բողոքելը ո՞րն ա: Եսիմ՝ ի՞նչ էին ուզում»,- հոր՝ Լևոն Ա.-ի մասին պատմում է դուստրը՝ Մարինեն: Լևոնը չէր աշխատում, դստեր պատմելով՝ անտառից մոր հետ հատապտուղ էր հավաքում, շուկայում վաճառում, բայց ամբողջ գումարը խմիչքի վրա էր ծախսում… Այս տարվա հոկտեմբերին բժիշկները հրաշքով են փրկել նրա մոր՝ 54-ամյա Սիրանուշի կյանքը՝ ամուսնու կողմից դանակով հարվածներից հետո…

***

«Քնած էի, ժամը 4-ին արթնացա մամայիս բղավոցներից: Քույրս՝ Արփինեն, դեռ քնած էր: Արագ վազեցի, տեսնեմ՝ ճաշասենյակի դուռը կողպված է, ու Վալոդն էլ (խորթ հայրը ) մամային էն կողմից հրում է անընդհատ: Մաման գոռում էր, որ ես բացեմ դուռը: Վազեցի խոհանոց, գդալ բերեցի ու դուռը հեշտ բացեցի: Ներս մտա, տեսա՝ վազը վերցրել է ու խփում է… Մամային փորձեցի փախցնել, բայց հասցրեց հետևից էլի խփել: Հետո մամային քարշ տալով՝ բերեց խոհանոց ու սկսեց դանակով հարվածել: Օգնություն էինք կանչում, խնդրում էինք, որ այդ բանը չանի, բայց մեզ չէր լսում, մեր աչքի առաջ սպանում էր մամային»,- պատմում է մի քանի օրում ցավից ու վշտից հասունացած 17- ամյա Անահիտը:

Մյուս քույրը՝ 14-ամյա Արփինեն, ընդհանրապես չի խոսում: Անչափահաս երեխաների աչքի առջև խորթ հայրը սպանել է իր 35-ամյա կնոջը՝ 21 անգամ դանակի հարվածներ հասցնելով…

***

…«Մեզ ուղարկում էր տեղաշոր ու ինքը սկսում մամային ծեծել, ձեներից էի հասկանում, որ ծեծում ա: Մի անգամ զարթնել եմ ու տեսել, որ դանակը մամայի վզին ա պահել»,- պատմում է Տաթևիկ Ն.-ի 10-ամյա որդին՝ Հովհաննեսը: Տաթևիկի 7-ամյա դուստրն էլ պատմում է, թե ինչպես է հայրը մեքենայով մորն ու իրեն տարել ամայի ու քարքարոտ վայր, դանակը դրել կոկորդին. միայն երեխայի խնդրանքից ու լացից հետո՝ պապա՛, խնդրում եմ, մի՛ արա, հայրը սթափվել է ու չի վնասել: Տաթևիկը ամուսնու կողմից 10 տարի բռնության է ենթարկվել ամենադաժան ձևերով՝ շիկացրած պտուտակահանով այրել ձեռքերը, ռետինե խողովակով ծեծել և վերջում, երբ կինը, չդիմանալով կտտանքներին, արդեն թողել, երեխաների հետ միասին տնից հեռացել էր, ամուսինը նրան հետապնդել և շքամուտքում 25 անգամ դանակահարել է…


*Լուսանկարը՝ ՄԱԿ-ի*

… 15-ամյա Սյուզին սենյակի ապակեպատ դռնից տեսել է, թե ինչպես է հայրը բռունցքով հարվածում մորը ու հետո դանակով հարվածում. «Գոռացի՝ պապան մամային սպանում ա, բայց մինչև եկան, մաման արդեն ուշքից գնացել էր, մինչև շտապ օգնության գալը, մամային ուրիշ մեքենայով տարան հիվանդանոց, բայց…» 5-ամյա Արմանը չի տեսել, թե ինչպես է հայրը դանակահարում մորը, քույրը՝ Սյուզին, հասցրել է այդ պահին ձեռքերով փակել եղբոր աչքերը, բայց երբ մորն արնաշաղախ հյուրասենյակ են տարել, ու հետո էլ մեծերի խոսակցություններից Արմանը հասկացել է՝ «մամային պապան ա խփել», պապին ասել է. «Մեծանամ՝ ես էլ իրան կսպանեմ»… 16 տարվա ամուսինները հազվադեպ են հաշտ ու խաղաղ ապրել, պատահել է՝ ամուսինը ձմռան ցրտին գրկի երեխայի հետ կնոջը տնից դուրս է հանել, իբր՝ պատժում է, կամ էլ Լուսինեին մի ոտի վրա ժամերով անկյուն է կանգնեցրել, չէր թողնում կինը տնից դուրս գար, հարևանների հետ շփվեր, արգելում էր որևէ տեղ կինն աշխատի: Սպանվելուց առաջ Լուսինեն որոշել էր վերջ դնել իր տառապանքներին ու ամուսնուն ասել էր, որ բաժանվում է…

**Հ.Գ. Եթե դուք ականատես եք եղել ընտանեկան բռնության դեպքի, ահազանգե՛ք արագ արձագանքման խմբին՝ http://rru.swv.am/:**

*Ըստ Նելլի Բաբայանի նյութերի*

## Արտագաղթն ու կինը

# «Էս էլ մեր խոպանն է»

**16 հազար բնակչություն ունեցող Ռուսաստանին սահմանակից Աբխազիայի Գագրա քաղաքում այսօր ապրում են մեծաթիվ հայեր, նրանք Աբխազիայում թվով երկրորդն են աբխազներից հետո:**

«Հայաստանից այստեղ հանգստացող շատ քիչ է գալիս, բայց մենք հայաստանցի հայերի պակաս չենք զգում»,- ասում է Լուսինար Գրիգորյանը, ով արդեն 40 տարի ապրում է Գագրայում: Սկզբում չհասկացա տիկին Լուսինարի ասածը, բայց արդեն երրորդ օրը ամեն ինչ պարզ էր. հայերն այստեղից մեկնում են Գագրա աշխատելու, ու նրանց հիմնական մասը կանայք են:

Գյումրեցի Ալվարդ Առաքելյանը արդեն 4 տարի շարունակ գարնանը՝ մայիսին, մեկնում է Գագրա և հոկտեմբերին վերադառնում հայրենիք: Ծովափին վաճառում է եգիպտացորեն, քաղցրավենիք, գարեջուր և այլն: «Առավոտյան ժամը 8-ից սկսած մինչև երեկո ծանր բեռները ուսերիս քայլում եմ ծովի երկայնքով ու գովազդելով վաճառում ապրանքս: Շատ հաճախ ձայնիս տոնայնությունից է կախված՝ ապրանքս այդ օրը լա՞վ կվաճառվի, թե՞ ոչ»,- մեզ հետ զրույցում ասում է Ալվարդն ու հավելում, որ ձայնը ինչքան ուժեղ, հզոր լինի ու ներկայացնելու ձևը համոզիչ՝ հաճախորդները այդքան շատ կգնեն իր ապրանքը:



Ալվարդը պատմեց, որ այս գործի մասին իմացել է շատ պատահաբար:

«Հեռվից լսելն ուրիշ է, տեսնելը՝ ուրիշ: Երբ առաջին տարին եկա ու հաջորդ առավոտ մոտ 20 կգ պայուսակս առա-եկա ծով, ասեցի՝ հաստատ երկար չեմ ձգի, բայց քանի որ Հայաստանից էի եկել, թասիբի հարց էր, մեռնեի էլ՝ պտի մնայի ու աշխատեի»:

Ալվարդի ուսապարկում դրված են մի քանի շիշ գարեջուր, քաղցրավենիք, ապխտած ձկներ, մի ձեռքին՝ 10 լիտրանոց դույլ է, որի մեջ տաք եգիպտացորեն է, իսկ մյուս ձեռքին՝ արկղ, որի մեջ դրված է խմորեղենի տեսականի:

«Չեք պատկերացնի՝ ինչքան դժվար է էս ամբողջը առավոտից իրիկուն քաշ տալ ծովի էս ծերից էն ծերը... դրա հետ էլ պտի գոռաս ինչքան ուժ ունես»,- ասում է Ալվարդը:

Մինչ զրուցում էի Ալվարդի հետ, մեզ մոտեցավ մեկ այլ վաճառողուհի, ով նույնպես Հայաստանից էր: Պարզվեց՝ ծովափին աշխատում են միայն Հայաստանից գնացած հայերը, այն էլ՝ կանայք:

«Սա էլ մեր խոպանն է,- մեր զրույցին միանալով ասաց Անահիտը, ով արդեն 3 տարի է, առևտուր է անում ծովափին: - Եթե Հայաստանում սրա կեսը աշխատեմ, հաստատ էլ չեմ գա: Ինչո՞ւ պտի աշխատանք չլիներ, որ մենք ընկնեինք այսպես թափառական ու մեր երկրում աշխատանք չունենայինք: Ես չեմ հասկանում՝ էդ վլաստը ե՞րբ պտի փոխվի: Մենք էլ ենք մարդ, մենք էլ ենք ուզում մարդավայել ապրել, բայց մեր հողի վրա»,- ասաց Անահիտը:

Կանանց երբ տեսա, առաջին հարցը, որ ծագեց մտքումս՝ արդյոք նրանք ամուսին ունե՞ն: Ու, անկեղծ ասած, անհարմար էի զգում նման հարց տալ: Սակայն նրանք ինձնից առաջ ընկան:

Անահիտի ամուսինը 10 տարի առաջ մեկնել է ՌԴ արտագնա աշխատանքի: Սկզբում ընտանիքին կանոնավոր գումար է ուղարկել, բայց որոշ ժամանակ անց գումարի չափը կամաց-կամաց նվազում է, իսկ վերջին մի քանի տարիների ընթացքում էլ՝ իսպառ վերանում: Պարզվում է՝ ամուսինը, ինչպես Անահիտն է ասում, «շեկ, սիրուն ռուս է ճարում» ու մոռանում նրանց գոյության մասին:

«Է՜, աղջի՛կ ջան, մինչ ամուսնանալը չէի էլ պատկերացնում, որ կգա մի օր, երբ երեխաներիս պահելու համար գումար կվաստակեմ նման տանջանքով, այն էլ՝ ընտանիքից, հայրենիքից հեռու»,- հուզված ասում է Անահիտն ու բացատրում, թե ո՞րն է իսկական ընտանիքը: «Ընտանիքը նա է, որ ամեն իրիկուն հավաքվեն, խոսեն, միասին հաց ուտեն, իսկ իմ ընտանիքը... Ես տարվա վեց ամիսը այստեղ եմ, վեց ամիսը՝ այնտեղ, բայց ուրիշ ճար չունեմ... մենակ կարամ ասեմ, որ խոպանը իմ տունը քանդեց»:

Մինչ Անահիտը պատմում էր իր ընտանիքի պատմությունը, Ալվարդը հասցրեց որոշ չափով իր ապրանքը վաճառել ու մոտեցավ մեզ. «Որ խոսենք ու մեր մասին պատմենք, քեզ ի՞նչ օգուտ...- ու չսպասելով իմ պատասխանին շարունակեց,- երբ ամուսնացա, մարդս չէր թողում, որ անգամ խանութ գնայի, խանդում էր, ուր մնաց աշխատեի: Ասում էր՝ դու նստի տունը ու ոչ մի բան մի՛ արա: Ես էլ դառել էի անլեզու հայվան... Հետո մարդուս գործերը վատացան, ասեց՝ ես գնում եմ խոպան, ու գնաց... էն գնալն էր, որ գնաց... Սկզբում հարազատներս, բարեկամներս, հարևաններս օգնում էին, հետո արդեն ամաչում էի՝ հո իրենք պարտավո՞ր չէին... էլ չերկարացնեմ: Հիմա, ճիշտ ա, շան տանջանք եմ ուտում, բայց երեխեքս հո կուշտ են,- ասաց Ալվարդն ու ավելացրեց,- էս խոսքս հիշի. հեսա ռուսները չեն պահի, ու հալից ընկած պտի հետ գա, ու էն ժամանակ ես չգիտեմ ի՛նչ կանեմ»:

...Արևն արդեն մայր էր մտնում, լողափին հատուկենտ մարդիկ էին մնացել: Բայց դեռ լսվում էին Ալվարդի, Անահիտի ձայները՝ «Գարյաչի կուկուռուզ, պիվա, ռիբա, կալեչկի…»

# «Ուղիղ 20 փարի լուր չունեի, ոչ գիտեի՝ կա, ոչ գիտեի՝ չկա»...

**«Մո-ռի՜կ, Շե-կո՜, Մա-րո՜ւս, վա՜յ, մի քիչ արա՛գ շարժվեք, ա՛յ տնաշեններ: Ամենալավ խոտը ուտում են ու էսքան քիչ կաթ են տալիս...»- Սառայի ձայնը մոտ 10 րոպե զրնգում էր գյուղով մեկ: Առավոտյան ժամը 7-ն էր: Ինչպես ասում են՝ կովերին գոմից հանելու պրոցես էր ընթանում:**
**«Տե՛ս, աղջի՛կ ջան, կաթը բավական քչացել է, երեք կովից ընդամենը 10 լիտր կաթ եմ կթել, էն մյուս երկուսն էլ ցամաքել են»,- դույլով լի կաթը ցույց է տալիս Սառան ու արագ-արագ կովերին քշում է գյուղամեջ:**
**Սառան միայնակ չորս երեխա է մեծացրել ու, ինչպես գյուղացիներն են ասում՝ «շան տանջանքով, կեսուր-կեսրարի փնթփնթոցն էլ վրադիր»:**

1990-ական թվականների մութ ու ցուրտ տարիներն էին: Սառայի ամուսինը՝ Գառնիկը, շատերի նման գնում է խոպան՝ փող աշխատելու: Սառայի մեծ տղան ընդամենը 9 տարեկան է լինում, իսկ փոքր աղջիկը՝ 2: Սառան ապրում էր Գառնիկի ծնողների հետ: Սկզբնական շրջանում Գառնիկից կանոնավոր գումար էին ստանում, բայց որոշ ժամանակ անց դեպքերը բոլորովին այլ ընթացք են ստանում:

«Ուղիղ 20 տարի լուր չունեի, ոչ գիտեի՝ կա, ոչ գիտեի՝ չկա: Գյուղացիներն ասում էին՝ հաստատ ամուսնացել է, ես, անկեղծ ասած, չէի ուզում հավատալ, քանի որ Գառնիկս ինձ շատ էր սիրում... Բայց արի ու տես, որ ռուսի համը ընկել էր բերանը, էլ կհիշե՞ր, որ մի անտեր ու հեռավոր գյուղում Սառան ամեն երեկո իրեն է սպասում»,- արցունքն աչքերին իր պատմությունն էր պատմում Սառան ու հավելում. «ասի՝ լավ, ինձ ա մոռացել, երեխեքին, բա իրա հալիվոր ծնողներին հո չի՞ մոռացել»:

Սառան պատմում է, որ ամուսնու ծնողներին ինքն է պահել: Չնայած ամուսինը եղբայրներ, քույրեր ուներ, բայց նրանք ասում էին՝ «դու տան հարսն ես, դու էլ պտի նայես»:

«Մեկ-մեկ մտածում էի՝ լավ, եթե իմ մարդը գնացել ա ու չկա, ես ի՞նչ գործ ունեմ էս տանը, ինչի՞ եմ պահում իրա ծնողներին ու դրանց պատասխանը չէի գտնում»:

Սառան պատմում է, որ երբ սկեսուրը մահանում է, թաքուն հույս էր փայփայում, որ գուցե Գառնիկը լուրը լսի, գա, բայց, իր խոսքով՝ սխալվում է...

«Չգիտեի՝ ես մարդ ունե՞մ, թե՞ չունեմ: Կեսուրս գեստապոյի նման ինձ հետևում էր: Հարևանների հետ իրանից թաքուն էի շփվում, իսկ տղամարդ հարևան որ տեսնում էի, գլուխս պտի կախեի, իսկ եթե կողքս էր լինում՝ բարև չպիտի տայի, քանի որ գիտեի գլխիս գալիքը: Ասում էր՝ Գառնիկս ստեղ չի, քեզ ազա՞տ ես զգում, հա՜, ա՛յ քած: Է՜, ո՞րն ասեմ»,- ասում էր Սառան ու արագ խաչակնքում՝ ասելով. «Ամա՜ն, հողը խաբար չտա»:

Սկեսրոջ մահվան դեռ մեկ տարին չլրացած՝ Սառայի սկեսրայրը որոշում է ամուսնանալ: «Պատկերացնո՞ւմ եք՝ կողքի գյուղից գնացի հարս ուզելու...» (ծիծաղում է.- խմբ.):

Սառան պատմում է, որ շատ ծանր տարիներ էին: Հազիվ էր հասցնում երեխաներին սնունդով ապահովել: Շոր ու կոշիկն էլ հարևաններն էին տալիս: «Բայց այդ դժվարությունից էդքան չէի նեղվում, ինչքան կեսրարիս փնթփնթոցից»:

Սառան ասում է, որ սկեսրայրը չէր ուզում, որ ինքն աշխատի գյուղի խանութում, ասում էր՝ գյուղացիք կբամբասեն, կասեն՝ Գառնիկի կնիկը... Մի օր էլ չդիմացա, ասի՝ փոխանակ շնորհակալ լինեք ու ասեք՝ ապրի՛ մեր հարսը, որ մեզ պահում ա, մեր տղեն անգամ չպահեց, մի բան էլ չգիտեմ ի՞նչ եք մտածում»: Սակայն Սառայի պոռթկումը ոչ մի օգուտ չի տալիս: Սկեսրայրը այդպես էլ թույլ չի տալիս, որ հարսն աշխատի:

Տարիներ են անցնում, մահանում է նաև Սառայի սկեսրայրը, ու, ի զարմանս Սառայի, հայտնվում է Գառնիկը:

«Եկել էր որպես օտար, աղջիկս ասում էր՝ մա՛մ, ո՞վ ա էս մարդը, տղաներս չէին ուզում ներս թողնել, ես եմ համոզել, ասել եմ՝ հո խայտառա՞կ չեք: Նա անգամ ինձ չմոտեցավ, մի հատ շնորհակալությունն ի՞նչ է՝ չասեց, գոնե ասեր՝ ապրես, որ հորս ու մորս առոք-փառոք պահել ես: Ես իլը ջհանդամ, չնայած ամբողջ կյանքում ինձ այդպես կին չզգացի, այլ կնոջ տեսքով մի տղամարդ»:

Սառան պատմում է, որ ամուսնու նման վերաբերմունքից հետո իր կյանքում շատ է բան փոխվում: «Նրա այդ պահվածքը պատճառ դարձավ, որ ես ուժ հավաքեմ: Ինքս ինձ ասացի. «Սառա՛, դու ամեն ինչ կարող ես, դու պտի ոտքի կանգնես ու բոլորին ապացուցես»:

Այդ դեպքից տարիներ են անցել: Սառայի գյուղում «ֆերմեր լեդի» անունն են կնքել: Այսօր նա ունի փոքրիկ ֆերմա՝ 5 կով և 30 գլուխ ոչխար:

«Տղաներս ինձ շատ են օգնում: Նրանք տեսնում են, որ ես իրենց համար ամեն ինչ արել եմ»:

Սառայի մեծ տղան սիրած աղջիկ ունի ու պատրաստվում է ամուսնանալու: «Մի անգամ տղաս ասեց՝ մա՛մ, ամուսնանամ, գնամ խոպան, ասացի՝ տղա՛ ջան, հուսամ կատա՞կ ես անում, քանի որ ինձնից լավ գիտես, որ խոպանը մեր տունը քանդեց, իսկ եթե գնաս էլ, ուրեմն կնկադ հետդ կտանես»: Այս խոսքից հետո Սառան սկսեց արագ-արագ ինչ-որ բան ման գալ: Հարցրեցի՝ ի՞նչ ես անում: Ասաց. «Աղջի՛կ ջան, մի աման սեր տամ, տար կեր, անարատ կաթից ա»: Մինչ ես որոշում էի մերժել, մեկ էլ սկսեց բարձր ծիծաղել ասելով. «Է՜, Սառա՛, ասա կեսուրիդ ու կեսրարիդ ժամանակ սենց բաներ անեիր... կանեին գյուղով մեկ խայտառակ»:

*Էջի նյութերը՝ Արմինե Գևորգյանի*

## «Տեր եմ», «Հնազանդ եմ»



**Ամուսնական երդման խորհուրդը հաճախ ճիշտ չի ընկալվում ոչ միայն սովորական մարդկանց, այլ նույնիսկ որոշ օրենսդիրների կողմից: Ահա ինչպես են այն մեկնաբանում Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հայրերը:**

Իրականում «տեր եմ» ու «հնազանդ եմ» արտահայտությունների մեջ ստրկացնելու որևէ միտում չկա: Տեր լինել նշանակում է սիրել, հոգ տանել, պաշտպանել, այլ ոչ թե իշխել կամ հրամաններ արձակել: Հնազանդ լինել նշանակում է հարգել ամուսնուն, աջակից ու համախոհ լինել, չի նշանակում կուրորեն հրամաններ կատարել: Ամուսինը և կինը ամուսնական հարաբերություններում ունեն հավասար պարտականություններ ու պատասխանատվություն, տարբեր են նրանց դերերը: Եվ նրանք պետք է տեր և հնազանդ լինեն իրենց առաքելությանը:

*Աղբյուրը՝ Qahana.am*

## Սպիտակ ժապավեն

### Հայ տղամարդիկ «ո՛չ» են ասում կանանց նկատմամբ բռնությանը

**Հայտնի ըմբշամարտիկ, 2012 թ. օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Արսեն Ջուլֆալակյանը կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարը խորհրդանշող «Սպիտակ ժապավենի» առաջին ասպետներից է Հայաստանում և այդ իրավունքով կոչ է անում կնոջ վրա ձեռք բարձրացնող տղամարդկանց իրենց ուժն օգտագործել այլ տեղերում, օրինակ՝ սպորտում:**

Արսենի հետ միասին հայաստանցի հայտնի շատ տղամարդիկ՝ Արսեն Գրիգորյանը (Մրո), Անդրեն, Հայկոն, Մարտին Վարդազարյանը, Ռաֆայել Քոթանջյանը, Սոս Ջանիբեկյանը, շախմատի հավաքականի ներկայացուցիչներն ու այլք, իրենց «ո՛չ»-ն են ասում ընտանեկան բռնությանը՝ «Նույնիսկ ընտանեկան բռնության մի դեպքն արդեն պատիվ չի բերում մեզ», «Ցավալի իրականություն է», «Դա ահավոր է», «Բռնությունը քարանձավային դրսևորում է», «Ես դատապարտում եմ», «Այն տղամարդը, որ կարող է ծեծի ենթարկել կնոջը, ինձ համար չի կարող տղամարդ կոչվել»…



Նրանցից շատերին մենք հանդիպեցինք այս տարվա մայիսին Կամերային երաժշտության տանը՝ «Ո՛չ ընտանեկան բռնությանը» ֆիլմի շնորհանդեսի ժամանակ, որը պատրաստել են «Կանանց իրավունքների կենտրոնը» ու նույն ՀԿ-ին կից գործող «Տղամարդիկ ընդդեմ կանանց բռնության» ցանցի անդամները: Ֆիլմի հերոսը մի երեխա է, ով պատմում է մոր ու իր նկատմամբ բռնությունների մասին...

## Լույս է տեսել

### «Աշխարհի բնակչությունը»- 2013




Հրապարակվել է ՄԱԲՀ-ի այս տարվա զեկույցը, որն անդրադառնում է աշխարհում դեռահասների հղիության և մանկահասակ մայրության հիմնախնդրին:Զեկույցի համաձայն՝ Հայաստանում կենդանի ծնունդների մոտ 8 տոկոսն է բաժին ընկնում մինչև 20 տարեկան մայրերին: Ինչ վերաբերում է դեռահասներին, ապա նրանց շրջանում ծնունդների թիվը կազմում է 28,3՝ յուրաքանչյուր 1000 կնոջ հաշվարկով: Ըստ զեկույցի՝ Հայաստանում մինչև 20 տարեկանների շրջանում աբորտների թիվը կազմում է մոտ 189՝ յուրաքանչյուր 1000 կենդանի ծնունդի հաշվարկով:

**Թողարկումը հրատարակվել է ՄԱԲՀ-ի եւ ՄԱՓԳՀ-ի գրասենյակներիի աջակցությամբ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության ակտիվության 16-օրյակ»-ի շրջանակներում**

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Էլ. հասցե՝ womennetam@gmail.com